Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով։

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար։

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի։

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ։ Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Արձակ, Վիպակ
13+

Աղասի Այվազյան
Ընտանիքի հայրը

ԱՌԱՋԻՆ ՎԵՐԱԴԱՐՁ: 1938:

1.

Միսակը աչքը հպեց նախամուտքի դռան զարդավոր ճաղերին: Ներսը խավար էր: Ուսով հրեց դուռը: Ամենավատ ժամանակը վերադարձի համար: Մարդիկ քնած են: Յուրայիններն էլ քնած կլինեն: Չի կարողանա նույնիսկ համբուրել նրանց: Պետք է սպասի մինչև առավոտ: Երկու և կես տարի հետո՝ համբերել ևս մի գիշեր:

Միսակը ճակատը հեռացրեց սառը ճաղերից: Անցավ տան կողքի նեղ փողոցով: Հացի փուռ՝ անուշ բույրով... Առավոտվա համար հաց են թխում: Տուն մտնելուց առաջ Միսակը միշտ հաց էր վերցնում: Ու նրան թվաց, թե նա բոլորովին չի բացակայել: Սա շարունակությունն է այն վերջին օրվա...

Միսակը մտավ փուռը: Դարակներին շարված էին տաք հացեր: Հացերի կողքին քնած էր այլուրոտված հացթուխը: Գլխին փոքրիկ փափախ, աստղն էլ վրան: Մյուսը բացած խմորը ծեփում էր թոնրի պատին:

— Ինչքա՞ն,— հարցրեց հացթուխը առանց Միսակին նայելու։

— Չորս հաց։

Հացթուխը շրջվեց.

— Միանգամից կերևա՝ ընտանիքի մարդ ես... Քանի՞սը ունես,— մտերմաբար հարցրեց նա։

— Երկուսը,— ասաց Միսակը, հետո հարցրեց.— Նիկոլը ո՞ւր է...

— Ի՞նչ Նիկոլ,— հացը մեկնելով ասաց հացթուխը։

— Էստեղ էր աշխատում։

— Չէ չիդեմ, ախպերս... Ամիսը մեկ փոխվում են... Մեկին բերում են էս փուռը, մյուսին՝ տանում էն փուռը, Արտելների բանը չես իմանո՞ւմ...

— Ես էստեղ եմ ապրում,— ավելացրեց Միսակը։

— Ուրի՞շ երկրից ես գալիս,— Միսակի ճամպրուկին նայելով ասաց հացթուխը և հորանջեց։

— Հա,— ուշացած արտասանեց Միսակը և զարմացավ, որ ամբողջովին սպիտակած հացթուխից սև ստվեր էր առաջացել։

Միսակը մոտեցավ տան բակի դարպասին և ներս մտավ։

Բակում ոչինչ չէր փոխվել։ Ցավ պատճառելու չափ ծանոթ էր շուրջը։ Լվացքի հոտը, ծուռտիկ պատշգամբները։ Սակայն հիմա ամեն ինչ ավելի փոքր թվաց նրան։ Փոքր և կուչ եկած Միսակը, դեմքը քսելով պարանից կախված թարմ սպիտակեղենն, անցավ բակը, մոտեցավ իր բնակարանի դռանը։ Կատուն թռավ ոտքերի արանքից։ Միսակը վառեց լուցկին։ Դուռը մեխած էր երկու փայտե ձողերովն՝ խաչաձև։ Եվ վրան մի մեծ կողպեք կար։ Ծվարեց։ Հացերն այրեցին մատները։

Նա տնտղեց դուռը։ Փայտերի վրա փոշի կար։ Դանդաղ, սակայն ներքին տագնապով մոտեցավ հարևան բնակարանի լուսամուտին։ Բաց էր, երկաթե վանդակ ուներ։ Միսակն իր կոշտ ձեռով ծեծեց երկաթե ձողը։ Եվ այնպիսի ձայն եկավ, ասես երկաթով հարվածեցին։ Սենյակի խորքում ինչ-որ բան շարժվեց։ Անհամբեր՝ կրկին ծեծեց։

— Ո՞վ է,— դժգոհ ասաց մեկը։

— Ես եմ...

— Ո՞վ ես...

Եվ պատուհանի վանդակի ետևում, մթան միջից հետզհետե առաջ եկավ մի ճմլորած դեմք։

— Ո՞ւր են...— գլուխը դռան կողմը մեկնելով՝ հարցրեց Միսակը։ Հետո հասկացավ, այդ դեմքի տարակուսած հայացքը։— Մի վախենա... Սա իմ տունն է... երեք տարի էստեղ չէի... Ո՞ւր են մերոնք։

— Չգիտեմ,— փնթփնթաց ճմլորած դեմքով մարդը։— Ես այստեղ չեմ ապրում...— Եվ նորից մտավ անկողին։

Միսակը շվարած կանգնել էր դռանը։ Ո՞ւմ հարցնել։ Այս կեսգիշերին արթնացնե՞լ հարևաններին... Դիմացը Պետրոսի տունն է։ Միսակը պատկերացրեց այն աղմուկը, որը առաջ կբերեր իր վերադարձը։

Կողքի դուռը բացվեց, և դուրս եկավ դեռ ճմլորած դեմքը, հետո նրա տիրոջ սպիտակ ներքնաշապիկով ներքևի մասը։

— Ես այստեղ չեմ ապրում...— ասես քիչ առաջվա նախադասությունը շարունակեց նա։— Ինձ խնդրել են, որ սենյակը հսկեմ։ Դրա համար փող են տալիս։ Իմ գալու օրվանից մեխած է այս դուռը...

— Մուրճ չե՞ք ճարի,— խուլ ասաց Միսակը։

Ճմլորած դեմքով մարդը վերստին ներս մտավ և քիչ հետո դուրս եկավ աքցանը ձեռքին։

— Իսկապե՞ս ձեր տունն է,— կասկածամտությամբ հարցրեց նա։

Միսակը առանց պատասխանելու սկսեց ծգել մեխերը, հարվածել տախտակներին։

Ճմլորած դեմքով մարդը նայում էր և զարմանում Միսակի ճարպկության վրա։

Միսակը պոկեց տախտակները և հրեց դուռը։

Դուռը ճռռալով ետ գնաց, և տաք, անդուրեկան հոտը դուրս փչեց։ Ինչքան էլ տհաճ էր դա, այնուամենայնիվ, զգացվում էր ծանոթ իրերի հոտը։ Լուցկին տվեց մարդու ձեռքը և ներս մտավ։ Ծունկը խփեց թախտի եզրին։ Թախտն առաջ այստեղ չէր։ Ճմլորած դեմքով մարդը նոր լուցկի վառեց, ներս մտավ ու հետաքրքրությամբ նայեց շուրջը։

Կանգնել էր սենյակի մեջտեղում Միսակը՝ բարձրահասակ, թիկնեղ, ու դիտում էր սենյակը։ Ճմլորած դեմքով մարդը Միսակի կողքին երևում էր առանձնապես փոքր։ Նա լուցկին լուցկու ետևից էր վառում։ Սպասում էր, մինչև մատներին էր հասնում կրակը, հետո պտտեցնում էր լուցկին և այրում մինչև վերջ։ Հանում էր տուփից հետևյալը և կպցնում նախորդի վերջին բոցից։ Տարվեց, շարունակեց. կարծես հաճույք էր ստանում այդ երեխայական խաղից։ Լուցկին հազիվ էր լուսավորում նրա դեմքը։ Քիթը թվում էր անոսկր մսի մի կտոր, այդ շարժվող մսի կտորի վրա՝ ծուռծուկալ ակնոց։ Ներքևի շուրթը կախված էր շեկ մազմորուքով ծնոտին։

Միսակը երկար նայում էր իրերի չքացող և կրկին նշմարվող ուրվագծերին։ Մեծ պահարանը չկար։ Վաճառել են։ Երմոնը գրել էր։ Նիկելած մահճակալը չկա։ Երևի նույնպես վաճառել են։ Այդ իրեն չեն գրել։

Միսակը բացեց որմնախորշը։ Երեխայի խաղալիքներ. անգլուխ արջուկ, ջարդված հեծանիվ, ինչ-որ փայտի կտորներ... Անկյունում երևաց հին լամպը, շատ մեծ, ինչպես

եկեղեցու աշտանակ, և Միսակը դուրս քաշեց դա։ Ապակի չուներ։ Միսակը ցնցեց։ Դատարկ էր։ Այնուամենայնիվ, միակ բանը, որ հիմա փոքր-ինչ լույս կտար, այս լամպն էր։

Միսակը լամպը սեղանին դրեց։ Ճմլորած դեմքով մարդը լուցկին մոտեցրեց պատրույգին։ Պատրույգը երկար ժամանակ չէր ուզում վառվել։ Վերջապես ճթճթաց և, կարմրեց մի փոքրիկ հատված։

Միսակը դարձավ դեպի ճմլորած դեմքով մարդը։

— Լավ...,— ասաց, որ շնորհակալության պես մի բան պետք է նշանակեր։

— Իմ անունը Պապիկ է,— ասաց ճմլորած դեմքով մարդը։— Երբ ձեզ պետք լինեմ՝ կարող եք կանչել։ Ես բնակարաններ եմ հսկում... Իմ ազնվության մասին կարող եք հարցնել բոլորին...

Միսակը չէր լսում։ Նա միայն հասկացավ, որ մարդու անունը Պապիկ էր, և որ չէր սազում այդ համեմատաբար երիտասարդ մարդուն Պապիկ անունը։

Պապիկը աղմուկով դուրս գնաց, և դեռ գիշերվա մեջ աղմկում էին նրա կոշիկները, մինչև լսվեց դռան ձայնը, ու Պապիկի աղմուկը խեղդվեց մթի մեջ։

Քիչ անց հարևան սենյակից լսվում էր Պապիկի խուլ հազը, խառնվում Միսակի մտքերին։ Իսկ մտքերը հին էին, անթիվ և խառնիճաղանջ։ Հին էին, որքան կարող էին հին լինել քսանհինգ տարեկան ամուսնու և հոր մտքերը։ Միսակին թվում էր, թե իր մտքերը իրենից ավելի մեծ են տարիքով։

Նստեց աթոռին։ Աթոռը ճռռաց և ծռվեց։

Պատրույգը դանդաղ հանգչում էր։ Նրա վրա կարմիր կետեր էին մնացել։ Դատարկ ու ամայի սենյակ։ Կարծես այստեղ երբեք մարդ չէր ապրել։ Պատերին մնացել էին ծնողների նկարները. հայրը փափախը գլխին, զինվորական համազգեստով, մայրը՝ ձեռքերը ծնկներին դրած։

Ու այս լքած, մութ ու սառը սենյակում՝ տաք հացի բույր, միակ կենդանի բանը, որ հին և մոռացված, ծանոթ զգացում բերեց։ Այդ բուրմունքն ամրացրեց Միսակի հույսերը։ Դա այն ծայրը եղավ, որից բռնվեց Միսակը։ Այդ բույրի, նրա ծնած զգացմունքների վրա վերստին սկսեց մտովի կառուցել իր փլված ընտանիքը։ Եվ մինչև կլուսանար, նա նորից ու նորից հիշեց իր ընտանիքի առաջին օրերը։

▪

Մարդիկ չեն սիրում, երբ որևէ մեկն ուզում է նրանցից տարբերվել։ Միսակը անգլիական գետրիներ էր հագնում։ Պատահմամբ էր գնել սև շուկայում։ Միսակի գիտակցությունը դրանց առնչում էր Էդիսոնի և, ընդհանրապես, նորի, գյուտարարության հետ։ Ու նա հատուկ ակնածանք էր զգում հագուստի այդ մասերի նկատմամբ։

Առավոտները կանուխ՝ մութուլուսին, Միսակը դուրս էր գալիս տնից, և անցնելով ճալաքարերով պատած փոքրիկ հրապարակը, արժանապատվությամբ, ոտքերի վրա տանում էր իր գետրիները։ Ու մինչև անցնում էր իրենց թաղի հրապարակը, դռների, պատուհանների, խանութների փեղկերի արանքից խեթ-խեթ նայում էին հարևանները։

Սակայն մարդիկ սիրում են ընտանիք կազմած մարդուն և նրան համարում են իրենցը։

Միսակը տասնյոթ տարեկան էր, ամուսնացավ Երմոնի հետ և քսանմեկ տարեկան հասակում երկու տղա ուներ։ Այդ էր պատճառը, որ փեղկերի արանքից հետևող հայացքների մեջ կար նաև կատակախառն մի բան։ Գրգռող, մարտահրավեր նետող օտարոտի գետրիների նկատմամբ նրանց դժգոհությունը երանգավորվում էր հումորով։ Ընտանիքը անձնագրի պես մի բան էր այդ փոքր հրապարակի շուրջը բնակվող մարդկանց համար։ Թերևս բոլորը առանձին-առանձին իրենց ծածուկ մեղքերը, ներքին դժգոհությունը և ուրիշ հազար ու մի բան ունեին ընտանիքի նկատմամբ, սակայն նրանք վախենում էին «ընտանիք» հասկացությունից, խոնարհվում նրա առաջ։ Ասես դա արյան մեջ լիներ, հին ցեղի անդադրում հոսող արյան մեջ։ Ասես այդ արյունը շատ խելոք էր։ Նա գիտեր, որ պետք է շարունակի հոսել ինչ-որ ճանապարհներով, ինչ-որ արագությամբ և երկար ժամանակ։ Ու կույր աստված էր, անզիջում օրենք մարդկանց համար՛։ Եվ բնազդով սարսափ էր առաջացնում, պղտորում էր ներքին իմաստը, անցածն ու ապագան, երբ խոսքը ընտանիքին էր վերաբերում, երբ ընտանիքին սպառնում էր որևէ վտանգ։ Դա արյան կույր ուժն էր, արյան կամքը, ցեղի խելքը։

Կիրակի օրը Միսակը տղաներին առաջն էր գցում, ինքը վերցնում Երմոնի թևը, գետրիները լավ ձգած՝ դուրս գալիս զբոսանքի։ Նրա ետևից շարժվում էր զոքանչը՝ տիկին Հռեբեկան, շուրթերն ամուր հպած, աչքերը հպարտությունից կիսախուփ և կզակը՝ երկու ծալ արած։ Երկար ժամանակ չէր, ինչ տիկին Հռեբեկան քաղաք էր տեղափոխվել։ Եվ «տիկին» նրան առաջին անգամ Միսակն էր անվանել։ Այդպես էլ գնացել էր... Թեպետ ականջի համար մի քիչ խորթ էր հնչում, սակայն Հռեբեկան կամաց-կամաց հարմարվեց «տիկինին»։

Նրա կողքից գալիս էր միշտ խմած ամուսինը՝ Թաթոսը, վախվորելով նայելով կնոջը։ Ետևից գալիս էր, անհանգիստ հայացքն այս ու այն կողմ նետելով, Թաթոսի քույրը՝ կապուտաչյա Ոսկին։

Բարևում էին հարևանները Միսակի ընտանիքին, սև, փոքրիկ հովարներով գլխարկները հանում, բարևի մեջ կուլ տալով Միսակի անգլիական գետրիների նկատմամբ ունեցած ծաղրը։

Տիկին Հռեբեկան իր տունը շինել էր խորտկարան։ Նա կերակուր էր եփում, և կողքի փոքրիկ գործարանի բանվորները ընդմիջմանը գալիս էին ճաշելու։ Գործարանի ճաշարանում անհամ էին պատրաստում, իսկ տիկին Հռեբեկայի ճաշերից տան հոտ էր գալիս։ Եվ նախապատվությունը տալիս էին նրան։ Դա նրա եկամուտն էր։ Թաթոսը այդ բանվորների հետ էր նստում ճաշելու, և ասես նրա կերածը չէր նկատվում։ Նա կատակում

էր, շատախոսում, ճաշին համ տալիս։ Սա էր Թաթոսի հիմնական աշխատանքը։ Սրանից ավելի նա ոչինչ չէր կարող անել։ Կիրակի օրերը, երբ բանվորները աշխատանքի չէին գալիս, հետևաբար և Հռեբեկայի մոտ ճաշելու, Թաթոսը սոված էր մնում։ Կուչ եկած պտտվում էր տան շուրջը, մինչև տիկին Հռեբեկան աչքերը ծռում էր և հերսոտ կանչում։ Թաթոսը վազելով ներս էր ընկնում ու կրկին սկսում կատակները։

— Հերիք խելառ-խելառ դուրս տաս... տեսնում ես մարդ չկա... սուսուփուս կեր,— ասում էր տիկին Հռեբեկան։

Միսակը ոչ ոք չուներ և մենակ էր ապրում։ Նա կիրակի էլ էր գալիս տիկին Հռեբեկայի մոտ ճաշելու։ Ու մնում էին տիկին Հռեբեկայի տանը Թաթոսը, Միսակը և տիկին Հռեբեկայի աղջիկը՝ տասնվեցամյա Երմոնը։

Թաթոսը, վերջացնելով ուտելը, մատներն էր լիզում։

— Լավ ճաշ ես եփում... Հռեբ ջան...

Կշտանալուց բոլորը թմրում էին, ու նրանց աչքերն ասես թաղանթով էին ծածկվում, իրենք ծանրանում էին, փլվում աթոռին։

— Երմոն ջան, երգիր, թող Միսակի սիրտը քիչ տաքանա... որբ տղա է,— ասում էր տիկին Հռեբեկան և, ժպտալով, առանց գլուխը շարժելու նայում էր Միսակին։

Երմոնը բացում էր իր փոքրիկ բերանը, և կլկլում էր նրա ձայնը Թաթոսի լեզվի ծտծտոցի հետ մեկտեղ։

Միսակին դուր էր գալիս Երմոնի գեղեցիկ ձայնը։

Ու Երմոնը բարձրացնում էր ձայնը, ձայնը չէր պարպում, Երմոնը զգում էր, որ պաշարն անսպառ է, պահում էր բարձր հնչյունը երկա՜ր, երկա՜ր...

Միսակը մտածում էր, թե որտեղից է և ինչպես, որ համարյա բոլոր հայ կանայք այդպիսի ձայն ունեն... Իր մայրն էլ լավ ձայն ուներ, թեպետ երբեք չէր երգում, և թե ինչպես էր իմացել այդ, Միսակը չէր կարող մտաբերել։

Միսակը ամուսնացավ Երմոնի հետ։

Ընտանիքի հիմքը դրվեց։

Ու դանդաղ աճում էր ընտանիքի կուռքը, խելոքանում, նվաճում Միսակի էությունը, երանգավորում իր հին ցեղին պատկանող արյան գնդիկները։

Եվ նա ամեն կիրակի դուրս էր գալիս զբոսնելու իո անփոխարինելի անգլիական գետրիներով։

Միսակի ընտանիքը անցնում էր հրապարակով: Միսակը լուրջ նշանակություն էր տալիս իրենց խմբին: Ինքը բարձրահասակ, Երմոնը կլոր, նրա կեսը, տիկին Հռեբեկան ինքնավստահ, թուլակամ Թաթոսը և Թաթոսի քույրը՝ Ոսկին:

Մի տարի հետո նրանց խումբը ավելացավ մի տղայով: Միսակը մի շատ սիրելի գիրք ուներ, որի մեջ համարյա ամեն ինչ կար: Նրա մեջ գրված էր առաջին դիրիժաբլի, առաջին շոգեքարշի, կինոապարատ հնարողի մասին... Միսակը թղթատեց իր գիրքը և տղայի անունը դրեց Ավոգադրո: Ոչ ոք չէր կարողանում արտասանել այդ անունը, ու նրան կրճատած ասում էին՝ Ավո:

Մի տարի հետո ավելացավ երկրորդ տղան: Միսակը կրկին քրքրեց իր գիրքը և այս տղայի անունը դրեց՝ Ֆարադեյ: Սրան էլ սկսեցին անվանել Ֆարո:

Տիկին Հռեբեկան ճաշ էր պատրաստում հիմա միայն Միսակի ընտանիքի համար: Ու հավաքվում էին մի կտուրի տակ, մի սեղանի շուրջ: Այդ յոթ հոգին: Ամեն մեկը իր մտքերն ուներ, իր արյան շրջանառությունը, բայց այդ սեղանը հավաքում էր նրանց մտքերը:

Ամպերը կուտակվեցին Միսակի ընտանիքի վրա:

Տիկին Հռեբեկայի և հարևան Պետրոսի խոզերը կռվեցին: Եվ քանի որ խոզերը իրար բան չէին կարող ասել, տիկին Հռեբեկայի սիրտը չհամբերեց. ինչ-որ բան ասաց նա, ինչ-որ բան ասաց իր խոզերի փոխարեն Պետրոսը: Նա հաստ բեղեր ուներ բերանի վրա, և նրա խոսքերը վատ էին լսվում: Դա տեղիք էր տալիս տիկին Հռեբեկային Պետրոսի փնթփնթոցի մեջ ուրիշ բաներ էլ լսելու: Հետո տիկին Հռեբեկան էլի ինչ-որ բան գոռաց: Հետո Պետրոսը էլի ինչ-որ բան ասաց: Հետո Թաթոսը դուրս եկավ: Հետո Երմոնի սիրտը վատ դառավ: Ավոգադրոն լաց եղավ նրա գրկում: Ֆարադեյը նույնպես ճվաց: Միսակը սենյակից դուրս չեկավ:

— Տղամարդ չկա, որ խոսեմ,— ասաց Պետրոսը, որոշելով, որ իսկական տեղին կպավ՝ Թաթոսին էլ մի բառով ոչնչացրեց:

Սա չափից ավելի էր: Սա խարխլեց Միսակի ընտանիքը, նրա հիմքերը: Միսակի մտքերը մի ուղղությամբ աշխատեցին: Դրանք մտքեր չէին. դա հին ցեղի արյունն էր:

Երեկոյան Միսակը չնկատեց տիկին Հռեբեկայի, Թաթոսի, Երմոնի հանդիմանանքով հայացքները:

Գիշերը Միսակը փակվեց իրենց խորդանոցում և հնարեց հրացան: Հնարեց, որովհետև նա կարգին ծանոթ չէր հրացանի հետ: Նա հնարեց և շինեց հրացան, ավելի ճիշտ՝ կրակող մի խողովակ:

Խորդանոցում նրան տանջում էր մի հոտ: Ինչ-որ մի անհասկանալի հոտ, որը հետագայում նրա հետ էր դատարանում, հետո բանտում, հետո՝ ուղղիչ աշխատանքի գաղութում:

Առավոտյան, երբ Պետրոսը հազաց, լվացվեց և դուրս եկավ տնից, ուզեց հրապարակն անցնել։ Միսակը իր կրակող խողովակով հետևեց նրան։

Նայեց Պետրոսի մեջքին։ Ամոթ զգաց, որ մեջքն է տեսնում։ Մեջքի վրա մի քանի սպիտակ մազ կար, գլխի թեփը և գլխի յուղից փայլ ստացած օձիքի եզրերը։ Այդ շատ ծանոթ մեջք էր, ինչ-որ մի բանով հարազատ, ինչ-որ բանով իր ընտանիքին մոտ։ Եվ Միսակը, ցանկանալով, որ Պետրոսը շրջվի դեմքով դեպի ինքը, որպեսզի ասի՝ «Պետրոս, տղամարդ էի՞ր ուզում...», խուլ ձայնով հարցական մտմտաց.

— Պետրո՞ս...

Պետրոսը շրջվեց և՝

— Հաջան...— ասաց նա։

Միսակը չհասկացավ ինչ կատարվեց։ Դա շատ զարմանալի էր։ Անսպասելի զարմանալի։ Այդ հայկական «հաջանը», որ հետագայում միշտ հնչում էր նրա ականջներում, որպես խորհրդանիշ հայկական ջերմության, ընտանիքի և ուրիշ շատ բաների, որտեղից որտեղ մեջ ընկավ։

Միսակը չհասցրեց խոսք ասել։ Միտքը բոլորովին ուրիշ բան էր կշռում, զգայարանները՝ ուրիշ։ Սակայն ամբողջ գիշերվա պատրաստությունը իր գործն արեց։ Մատը ձգեց, բարձրացավ ծուխ, բոց, և Պետրոսը երերաց ու այնպես դանդաղ իջավ գետնին, ասես նստում է նարդի խաղալու։

Միսակը չզարմացավ, որ մարդ սպանեց։ Միսակը չզարմացավ, որ հրացանը կրակեց։ Միսակի զարմանքը «հաջանն» էր։

Ու կանգնած հրապարակի կենտրոնում, Պետրոսի դիակի վրա, մտածում էր այդ «հաջանի» մասին, այդ զարմանահրաշ բառի մասին, որ միայն հայերը ունեն, որ ով գիտե որտեղ էր ծնվել և այստեղ նորից հնչեց։

1934 թվականն էր։ Լոմբրոզոյի ուսմունքի դեմ գրքեր էին գրում և հավատում էին, որ մարդասպանին կարելի է ուղղել։

Մեղադրյալի աթոռը զբոսայգուց բերած նստարանն էր, երկաթե ոտքերով։ Միսակը նստած էր վրան։ Դատարանի դահլիճում գտնվում էր նրա ընտանիքը. տիկին Հռեբեկան՝ հպարտ, գոհ դեմքով, Երմոնը՝ անհասկանալի արտահայտությամբ, վեհերոտ Թաթոսը և Ոսկին։ Չգիտես ինչու, Երմոնը դատարան էր բերել Ավոգադրոյին և Ֆարադեյին։ Ավոգադրոն աղջկա երկար գուլպաներ էր հագել, կողքից կանացի կապիչով բարձրացրած։ Մի կապիչը կտրվել էր, և գուլպան ընկել ծնկից ներքև։ Միսակը նայեց ընկած գուլպային, և սիրտը ճմլվեց։ Կախված գուլպան շատ մանկական էր, խղճուկ, ու ասես ինչ-որ զգացմունքով ընտանիքի նշանաբանն էր։ ՛

— Ղոչաղ կաց,— ասաց Թաթոսը՝ բութ մատը վեր պարզելով, հետն էլ նայեց տիկին Հռեբեկային, ստուգելու համար, թե ճիշտ է արդյոք ինքն անում։

Մյուս կողմում Պետրոսի կինն էր իր տղայի հետ։

Ի հեճուկս Լոմբրոզոյի՝ Միսակին դատապարտեցին վեց տարվա ազատազրկման։

Բոլոր իշխանությունների համոզմամբ՝ կալանավորի համար աշխատանքն է ամենադժվարը։

Ինչ գիտենային, որ աշխատանքը Միսակի ամենասիրած բանն էր։ Միսակին երկրորդն էր պակասում՝ ընտանիքը։ Ու որպեսզի նա հնարավորին չափ քիչ հիշի ընտանիքը, Պետրոսի «հաջանը», և մոտեցնի իր վերադարձի օրը՝ ամբողջովին աշխատանքի մեջ էր մտել։ Ավելի ծանրը այն միտքն էր, որ ինքը պակասում է ընտանիքին։ Ու նա բոլորին հիշում էր ավելի խեղճացած։ Նա պատկերացնում էր Երմոնին, սիրունությունը կարծես ավելացնում էր խեղճություն, Ավոգադրոյի ընկած գուլպան սեղմում էր Միսակի կոկորդը, Թաթոսի վեհերոտությունը՝ ավելի վեհերոտ էր թվում, անպաշտպան, և նույնիսկ տիկին Հռեբեկայի երկծալ կզակը՝ կարեկցելի։

Ու Միսակը միայն մի պահանջ էր զգում, մի բան էր ուզում, կրկին հավաքեր իր շուրջը այդ յոթ հոգուն, պաշտպաներ նրանց, ուժ տար, ջերմություն տար... Ու աշխատեր, աշխատեր նրանց համար, մի կուռ ընտանիք կազմեր, հետո ուժեղացներ այդ ընտանիքը, ուժեղացներ, դարձներ տասը հոգի, հետո քսան հոգի, հետո ավելի բազմաթիվ... Այդպես էր մտածում Միսակը։

Ուղղիչ-աշխատանքային գաղութը Հայաստանից հեռու էր գտնվում։ Ու Միսակը հաճախ նայում էր դեպի արևմուտք։ Եվ մի ուրիշ կալանավոր՝ Վենդելին Գակը միշտ նրա կողքին էր։ Նրանք մտածում էին, խոսում, հաշվում օրերը... Վենդելին Գակը ռուսացած գերմանացի էր, Ուրալի սովխոզներից մեկում մեխանիզատոր էր եղել, նա չէր սիրում հիշել իր մասին, ու նրա կյանքի պատմությունն էլ շատ մութ էր, առեղծվածային... Այդ պատճառով նրանց զրույցը միշտ Միսակի ընտանիքի շուրջն էր լինում։ Միսակը ցույց էր տալիս իր նամակները, և Գակն արդեն ճանաչում էր տիկին Հռեբեկայի և Երմոնի ձեռագրերը, թեպետ հայերեն ոչ մի բառ չգիտեր։

— Պետքական մարդ ես,— ասում էր Գակը,— քեզ նման մարդիկ պետք է շատ լինեն աշխարհում... Սիրում ես աշխատել...

Մեկ անգամ Միսակը տեսավ, թե ինչպես էր բանվորներից մեկը պնդօղակ շինում։

— Ինչո՞ւ ես ձեռքով շինում,— հարցրեց Միսակը։

— Հրեն մամլիչը,— ցույց տվեց Գակը,— անտեր են թողել...

Միսակը սկսեց պտտվել ժանգոտած մամլիչի շուրջը, վերջն ասաց.

— Ես կաշխատեցնեմ մամլիչը։

Կալանավորներից մեկը խեթ-խեթ նայեց Միսակին և թքեց գետնին։

— Կաշխատեցնեմ,— կրկնեց Միսակը։

Եկավ գլխավոր ինժեները։

— Թովմասյանը ուզում է աշխատեցնել մամլիչները, քաղաքացի ինժեներ,— ասաց Գակը,— թույլ տվեք...

— Խաղա՞լ ես ուզում,— հեգնանքով ասաց ինժեները, հետո չափեց Միսակին ոտքից գլուխ և կասկածանքով հարցրեց.

— Քանի՞ օր ես ուզում...

— Չգիտեմ։

— Ուզում ես հանգստանա՞լ... Լավ ես մտածել,— ծիծաղեց արտադրամասի պետը։

— Շատ ենք չարչարվել, բան դուրս չի եկել,— շեշտակի նայելով Միսակին՝ ասաց ինժեները։

— Կաշխատեցնե՛մ,— հաստատ ասաց Միսակը։

— Դե, տես,— ասաց ինժեները, իսկ հետևում կանգնած կալանավորը կրկին թքեց գետնին՝ մի արտասովոր ձևով։

Չորս օրից հետո մամլիչները աշխատում էին։

— Զարմանալի է...— ասադ Գակը,— քո արածը զարմանալի է... Դու մեքենաների լեզուն գիտես... Դա սովորելու բան չէ... Դա էության մեջ է՝ արյունով հավաքել, աշխատեցնել, շարժել...

Երևաց ուղղիչ աշխատանքային գաղութի պետը՝ Չիժը։ Նայեց մամլիչներին և, ուրախության փոխարեն, գոռաց.

— Ի՞նչ էիք մտածում մինչև հիմա... Տեսեք ով շինեց...,— ու դարձավ Միսակին,— Մոսկվա կհայտնեմ քո մասին... ազգանո՞ւնդ...

— Թովմասյան,— վրա բերեց Գակը։

Եվ Չիժը գնաց։

Գաղութում ևս պլաններ կային։ Պլանների ժամանակ էր։ Եվ պլանները ժամկետից շուտ կատարեցին։ Խնայողությունը մեծ էր, իսկ պատճառը՝ մի Միսակ և պնդօղակ։

Ակումբում հավաքվել էին նշելու հաղթանակը։ Մոսկվայից հեռագիր էին ստացել, պետի տրամադրությունը լավ էր, կրծքին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան։

Դահլիճում նստած էր նաև Միսակը, Գակը՝ կողքին։

Միսակը երբեք գործ չէր ունեցել գրամեքենաների հետ: Այնուամենայնիվ, հանձն առավ կարգի բերել: 1935 թվականն էր: Մասնագետներ քիչ կային:

Միսակը քանդում էր մեքենան, մաս-մաս անում, ծանոթանում կառուցվածքին և հետո սկսում նորոգել: Գիշերներն էլ էր մնում Միսակը: Քանի որ գիշերները մոտեցնում էին հանդիպման օրը:

Մեքենագրուհի Վալենտինա Վայնշտեյնը նայում էր Միսակի ոգևորված ձեռքերին, լարված հայացքին, գանգուր մազերին ու ջղայնանում: Եկավ գիշերով: «Լսիր,— ասաց նա,— չե՞ս տեսնում, թե՞ կենդանի մարդ չես»: Փարվեց Միսակին, կուրծքը դրեց նրա կրծքին: Միսակի շունչը կտրվեց, հաճույքն ու ցավը խառնվեցին իրար, հիշեց ալարկոտ Երմոնին գիշերվա շապիկով: Միսակը ձեռքերը չհեռացրեց մեքենայից: «Թող այդ երկաթի կտորները, ո՞ւմ են հարկավոր...»,— տաք շնչառության հետ մեկտեղ խոսքերը փչեց Միսակի բերանը:

Երբ Վալյա Վայնշտեյնը հագնվում էր, ոչ մի անգամ չկարողացավ նայել Միսակին: Ծխեց մի գլանակ ու մրթմրթաց. «Ես դեռ տղամարդուց չէի ամաչել... Տարօրինակ մարդ ես... Մի՞թե կինդ ինձանից լավն է...»

Միամիտ, պարզ աչքերով նայեց Միսակը: Այդպիսի հայացք կանայք չեն սիրում: Վալյան էլ չէր սիրում:

Բարաքում իրար կողքի էին Միսակի ու Գակի մահճակալները: Գակը սիրում էր Միսակի պատմությունները մարդկանց, նրանց կյանքի մասին: Ասես նա կյանքերի հավաքածու ուներ և ավելացնում էր նոր ու նոր կյանքեր: Ու Գակն արդեն գիտեր ճալաքարերով պատած հրապարակի բոլոր բնակիչներին՝ Քոռ Արութին, Դաբաղ Յուվանին, Չուգուն Վաղոյին, Չփլաղ Սմբատին, որը ձմեռ-ամառ մերկ էր ման գալիս և իր գաղտնի պատմությունն ուներ: «Զարմանալի մարդիկ ունի ձեր երկիրը,— ասում էր Գակը,— ծայրահեղ զգացմունքներով, ողբերգական և նույնքան էլ ծիծաղելի: Ինքնասպանի աչքեր ունի քո ազգը...»:

Միսակը հարգում էր և այն, որ Գակը իրենից մեծ էր, և այն, որ Գակը խելոք բաներ էր ասում:

«Քո մեջ ինչ-որ բան կա, Միսակ... Գուցե սովորական է... բայց և շատ բարդ... Դու ընտանիքի հոր որակ ունես...»:

Միսակը այդ «ընտանիքի հայրը» ուրիշ կերպ էր ընկալում, դրա վերաբերյալ նա իր մտքերն ուներ, իր աշխարհը: Գակը ուղղակի բարդացնում էր: Եվ դա ինչ-որ բանով հաճելի էր Միսակին: Ու կուտակվել էին Միսակի ուղեղում Գակի խոսքերը, մահճակալների փայտի շոշափումով, երկու տարվա գունավորումով: Միսակի ուղեղում քուրա էր առաջացել, և առաջին մտքից բորբոքվում էր ու հիշվում էին Գակի խոսքերը: Դրանք միանգամից չէին

ասվել։ Երկու տարվա հավաքածուն էր։ Ահա այսպիսին էր Միսակի քուրան. «Աշխարհին հարկավոր են «ընտանիքի հայրեր»։ Իսկ Միսակի ժողովրդին հատկապես են հարկավոր։ Դրա մեջ մեծ իմաստություն կա։ Մարդիկ իրարից փախչում են, իրարից փախցնում... Այդ բոլորի մեջ մի գրոշի խելք չկա։ Հետո իրենք իրենցից են փախչում, մոլորվում են, այդ էլ չի օգնում, չեն հասկանում, թե ինչ են ուզում... Իսկ գալիս են «ընտանիքի հայրերը» և հավաքում տարբեր մարդկանց։ Աշխարհը նրանց վրա է կառուցված, նրանցով է կանգուն։ Փոքրիկ «ընտանիքի հայրեր»՝ Միսակի նման, հետո շատ այդպիսի հայրեր, հետո ժողովրդի «ընտանիքի հայրեր»։ Դժվար գործ է ընտանիք հավաքելը։ Մեծ օրինաչափություն կա, որ աստված, այնուամենայնիվ, ստեղծում է այդ մարդկանց։ Նրանք միշտ վտանգի տակ են, նրանց ոչնչացնում են, նրանք միշտ առաջին գծի վրա են, թևերի տակ հավաքած իրենց ընտանիքը՝ ամեն տեսակի անդամներով՝ խելոք, խեղճ, քնքուշ, հիվանդ, ու տանում են կրակի գծով, մերկ աշխարհով... Եվ տա աստված համբերություն, ուժ նրանց... Վայն այն ժողովրդին, որ արդեն չունի ընտանիքի հայրեր, ընտանիքի հայր...»։

Գաղութի վարչությունը Միսակին առանձին սենյակ տրվեց։ Միսակի խնդրանքով Գակին ևս տեղավորեցին նրա մոտ։

Վալյա Վայնշտեյնը հաճախ էր գալիս Միսակի մոտ։ Նստում էր, նայում Միսակին և տխրում.

— Էխ, Միսի, եթե ինձ հետ լինեիր, ինչպես կսիրեի։ Դու չես պատկերացնում, թե ինչպես...

— Երբ կազատվենք՝ ինձ մոտ հյուր կգաս...,— ասում էր Միսակը։— Չոքանչս այնպիսի քյուֆթա է եփում, որ մատներդ հետը կուտես...

— Էխ, Միսի,— ասում էր Վալյան, հետո տարօրինակ աչքերով նայում Միսակին, մի գլանակ ծխում և ավելացնում,— դուրս կգամ այստեղից, քո ջգրու կապրեմ ինչպես հարկն է, կայրեմ իմ կյանքը և նորից այստեղ կգամ... Թող խիղճդ տանջի։

Միսակը հիշում էր Պետրոսի «հաջանը» և ծանր շունչ քաշում։

— Մինչև ե՞րբ պետք է սիրես կնոջդ,— հարցնում էր Վալյա Վայնշտեյնը։— Երևի ինչ սևն է, մազոտը... Հայերը մազոտ են լինում...

Միսակը սփրթնում էր։

— Լավ, լավ, էլ չեմ ասի...

Լավ աշխատանքի համար Միսակը տասնյակ շնորհակալություններ էր ստացել։ Սենյակի պատերին այլևս տեղ չկար։ Եվ վեց տարին կրճատվեց, դառավ երեք տարի։ Դեկտեմբերի 17-ին Միսակին ազատեցին։ «Մնա մեզ մոտ,— ասաց Չիժը,— բարձր աշխատավարձ կստանաս»։

Վալենտինա Վայնշտեյնը անհույս աչքերով նայում էր Միսակին։

Ողջագուրվեց Գակի, Վայնշտեյնի հետ, հետո մոտեցավ Չիժին։

— Գուցե, այնուամենայնիվ, մնա՞ս...— ասաց Չիժը։

— Կարոտել եմ ընտանիքիս...

Միսակը նստեց գնացք և երկար մտածում էր հազար ու մի բանի մասին։

Ճամպրուկի մեջ իրեր կային Ավոգադրոյի, Ֆարադեյի, Երմոնի, Թաթոսի, Հռեբեկայի համար։

▪

Մարդկային շնչառությունը տաքացրեց, կենդանացրեց Միսակի բնակարանը։ Վերստին հավաքվեցին Միսակի շուրջը՝ այս ու այն կողմ ցրված, տունն ամայության մատնած ընտանիքի անդամները։ Ավոգադրոյին և Ֆարադեյին տիկին Հռեբեկան գյուղ էր տարել՝ եղբոր կնոջ մոտ։ Ավոգադրոյի վրա էլի աղջկա գուլպաներ էին, թաքը միշտ ծնկից ցած իջած, հագուստը՝ տարբեր մարդկանց վրայից։ Ֆարադեյի գլխարկը մինչև քթարմատը։ Նայում էին նրանք Միսակին հանգիստ, մի քիչ զարմացած։ «Դժվար է եղել առանց ինձ,— մտածեց Միսակը և խիստ, սակայն սրտացավով ավելացրեց.— Էլ ուրիշ, ճաշակով բան չկա՞ր...»։ Հետո ուղղեց Ավոգադրոյի գուլպան, բարձրացրեց Ֆարադեյի գլխարկը։ «Գլխավորը տաք լինի երեխեն»,— մրթմրթաց տիկին Հռեբեկան։

Թաթոսը պահակություն էր անում և, որովհետև վառարան կար հիմնարկում, այնտեղ էլ քնում էր։ Երմոնը մակարոնի ֆաբրիկայում էր աշխատում։ Ֆաբրիկան հեռու էր քաղաքից, ու որոշել էր ձմեռը անցկացնել հանրակացարանում։

Միսակը բացեց ճամպրուկը, և բոլորը թափվեցին վրան։ Քիչ հետո յուրաքանչյուրը գրկել էր իրեն հասանելիք իրը և կրկին նայում էր դատարկ ճամպրուկին։

«Այդ գլխարկը հանիր, գյուղացու նման ես դառնում»,- ասաց Միսակը Երմոնին երկար նայելուց հետո։

«Արդեն չես հավանի, հաա...,— կես կատակ, սակայն ներքին դժգոհությամբ ասաց տիկին Հռեբեկան։— Գիտեմ, գիտեմ... Ենտեղ սիրուն ռսների հետ ես եղել... մեզի էլ ղաբուլ չես անի»։

Միսակը պպզեց, գրկեց Ավոգադրոյին ու Ֆարադեյին։ Նրանց մատղաշ ոսկորները փախչում էին Միսակի կոշտ ձեռքերի միջից.

— Երմոն,— ասաց Միսակը։

— Հաջա՛ն,— երգեցիկ ձայնեց Երմոնը։

Ասես հարվածեցին Միսակի գլխին. նրան թվաց, թե իր գրկի մեջ Պետրոսի տղան է։ Թողեց հանկարծ ձեռքերը, վեր ելավ։

— Ճիշտ ասա, կարոտե՞լ ես կնկանդ ձայնին,— ասաց տիկին Հռեբեկան։

Երմոնը աչքերը ոլորեց, գլուխն իջեցրեց ցած։

Միսակը լարված էր, միտքն՝ ուրիշ տեղ։

— Հեչ չեք փաթաթվում,— քրթմնջաց Թաթոսը։

— Իմ ուղարկած փողերը ժամանակին ստանո՞ւմ էիր,— հարցրեց Միսակը երկար ընդմիջումից հետո։

— Հա, Միսակ ջան, բայց ինչքան ժամանակ հերիք աներ,— ժպտուն աչքերով, լացախառն ձայնով ասաց Երմոնը։

— Տանը որ տղամարդ չկա՝ տուն չկա... Տղամարդու հոտը նույնիսկ մեծ բան արժե,— ասաց Թաթոսը։

Իսկ բակում Պետրոսի կինը ողբում էր, անիծում Միսակի վերադարձը։

ԵՐԿՐՈՐԴ ՎԵՐԱԴԱՐՁ: 1945:

1.

Միսակը շուտ-շուտ մոտենում էր վագոնի պատուհանին։ Իսկ երբ երևացին Հայաստանը հիշեցնող բնանկարներ, Միսակը այլևս չէր կարողանում պոկվել պատուհանից։ Ծխախոտը գտնվում էր գերմանական զինվորական թիթեղյա տուփի մեջ, ու Միսակի երկու մատը հազիվ էր տեղավորվում։ Միսակն արդեն ընտելացել էր ծխախոտ հանելու դժվարությանը, ու ինչ-որ ձևով, ասես այդ տուփից, հանում էր իր մտքերը անցած օրերի, պատերազմի մասին։ Իսկ առջևում ընտանիքն էր. Երմոնը, Ֆարադեյը, Ավոգադրոն, Կարինեն, տիկին Հռեբեկան... Ինը հոգին։ Այդ ինը մարդը, որոնց կողմ հիմա շտապում էր նա։ Այդ ինը մարդը միշտ և ամենուր՝ բեռնատար վագոններում, խրամատներում, քաղաքների ավերակներում, պատերազմի ամեն տխուր և մութ տեղերում երևում էին ինչպես ինը մոմ։ Մարմինները դեղնած, բարակած, գլուխները՝ փոքրիկ կրակներ։

Այդ երերացող կրակները աչքեր ունեին, բերան, ժպիտ... Ֆարադեյը փոքր, տխուր կապտագույն կրակ էր, Ավոգադրոն՝ լացակումած նայվածքը սպասումի մեջ, Երմոնը՝ փոքրիկ բերանով և կարոտալից, նվիրված աչքերով։

Վագոնը լցված էր զինվորներով։ Ուրախությունից հայհոյում էին իրար։ Միսակը նայում էր դուրս և կարդում կիլոմետրերի ցուցաձողերը։

— Միսակ, ինչ ես պատուհանին կպել, կհասնենք, էլի,— ասաց գնդապետը։

Կողքի պատուհանից դեպի գնդապետը, հետո դեպի Միսակը նայեցին մի զույգ խոշոր բացած աչք։ Նրանց մեջ շատ տարածություն կար և մի քիչ էլ վախ։

— Չեն զգում,— ասաց աչքերի տերը՝ կրտսեր լեյտենանտը, և մոտեցավ Միսակին։— Ես էլ քեզ պես անհամբեր եմ... վախենում եմ չհասնեմ... ուշանամ... Քիչ առաջ ներսս ինչ-որ ձայն ասում էր. «Եթե ծխախոտդ պատուհանից դուրս նետես՝ շուտ կհասնես»։ Նետեցի։ Հետո

այդ ձայնն ասաց. «Եթե տուփը դուրս նետես՝ ավելի շուտ կիասնես»։ Նետեցի։ Հետո ասաց. «Եթե գլխարկդ նետես՝ ժամանակն ավելի արագ կանցնի, ավելի շուտ կիասնես...» Հը՞։ Ի՞նչ եք կարծում։ Տանը մայրս է սպասում։

Միսակը նայեց լեյտենանտի գլխին։ Գլխարկ չկար։

Միսակը մոտեցավ ուրիշ պատուհանի։

Կուպեում աղմկում էին։

Պատուհանից՝ կրկին ուղեձողերի թվանշանները։ Դեմը՝ ինը մարդ, ինը մոմ, խոսում էին Միսակի հետ, թարթում աչքերը ու պատմում նրան հանդիպումների ու բաժանումի մասին։ Ու հիմա զգաց Միսակը, որ այս հանդիպումից հետո էլ կարող է բաժանում լինել։ Վախով զգաց, որ բաժանում վերջիվերջո անպայման լինելու է։ Եվ դրա համար պետք է ընտանիք, ընտանիքի ընտանիք, մի համատարած ընտանիք... Անհամբերությունն ավելի աճեց։ «Ի՞նչ վիճակում կտեսնի իր ընտանիքը։ Ավոն արդեն կարգին մեծացած պետք է լինի, զինվորացու է։ Միսակը կրկին հաշվեց Ավոյի տարիքը։ Երմոնի հոգսերը շատացած կլինեն... Վաղուց նամակ չէր ստացել։ Վերջին նամակում Թաթոսի մահվան մասին էին գրել... Տունը բոլորովին առանց տղամարդ էր մնացել...»։

Միսակը մատները կուչ բերած՝ վերստին մտցրեց նեղ տուփը ծխախոտ հանելու։ Կարծես ծխախոտի հետ տուփն էին խցկած չորս տարվա ապրումները։

Պատերազմի չորս տարի։ Վախ, հող, կրակ...

Շարժվում էր գունդը, քայլում օր ու գիշեր ճանապարհներով։ Մարդիկ քնած քայլում էին։ Շեղվում էր գունդը ճանապարհից։ «Եզրայիններին արթուն մնալ, մնացածը կարող են քնել»,— հրամայեց մեկը։

Շարքի մեջ քայլում էր Միսակը։ Հաճախ աչքերը կիսատ բացում էր և տեսնում սև գետինը ու նրանից քիչ տարբերվող հորիզոնի գիծը։

Անթեղվող սյուները, մթության մեջ մնացած տան միակ պատը։ Պատի վրա մնացել էր կիթառը։ Երևի, երբ արկը կպել է տանը, կիթառը զնգացել է, ու այդ զնգոցը խառնվել է ահավոր փլման դղրդոցին։

Միսակը փակում էր աչքերը և մտաբերում իրենց պատը, վրան երկու նկար՝ հայրը, մայրը՝ ձեռքերը ծնկներին, ինքն ու Երմոնը ամուսնության օրը։ Միսակը նոր միայն մտածեց, որ հայրը զինվորական հագուստով էր նկարահանված։ Ուրեմն նա էլ է այսպես շարքի մեջ քայլելիս քնել, նա էլ է հիշել իր տան պատը, վրան նկարներ երևի՝ նրա հոր և մոր և էլի ուրիշների...

Ու կարող է պատահել այսպես անվերջ քայլեն իրենց ընտանիքի տղամարդիկ, օրերով, կիսաքուն, հրացանները ուսին... Մարդիկ ապրում են քայլելով։ Կարող է պատահել, որ այսպես քայլի Ավոն։ Ու, չգիտես ինչու, Միսակը Ավոյին պատկերացրեց հրացանը ուսին, կարճ շալվարով և մի գուլպան ծնկից կախ։

Միսակը նայեց կողքի զինվորին։ Նրա աչքերն էլ փակ էին։ Նա էլ երևի իր ընտանիքի մասին էր մտածում։ «Բոլոր զինվորները ունեն ընտանիքներ։ Ու բոլոր ընտանիքները քայլում էին հիմա այսպես, միասին, այս ճանապարհով»։

Վագոնի պատուհանից դաշտերի անդորրն էր, անկանոն ու կանոնավոր բնությունը, ու Միսակը մոռացավ իսկականը և լցվեց ավելի իսկականով՝ հավերժությամբ...

Դուռը կրկին խաչաձև մեխած էր։

«Էլի նույն մարդուն են մեխել տվել»— մտածեց Միսակը։ Ճաշից հետո էր։ Բակում ծույլ լռություն էր, մարդ չկար, և նրա գալը ոչ ոք չնկատեց։ Երկրորդ հարկի անկյունում մի կին մազերն էր սանրում, մազերը ներքև թափած, երեսնիվայր, ծածկել էր աչքերը, և սանրը քսում էր ճակատից մինչև կուրծքը։

Միսակը երկու մեծ ճամպրուկներ իջեցրեց ցած, նստեց նրանցից մեկի վրա և հիմա միայն զգաց, որ սաստիկ հոգնած է, որ ցավում են ոտքերը, վերքերը և ոտքի մատները սառած են։

Հարևան դռան մեջ երևաց Միսակին անծանոթ, խիստ շարժուն երիտասարդ մի կին։

— Պապիկը էստեղ չի՞,— հարցրեց Միսակը, ուշացած մտածելով՝ ուզում էր հարցնել ծեր Մարիամի մասին, բայց ստացվեց այսպես։ Եվ ո՞վ է այս կինը։

— Սա Պապիկի տունը չէ, սա իմ տունն է,— ջղայնացավ կինը, և նրա շուրթը դողաց։

— Էստեղ Մարիամն էր ապրում,— ներողությունով ասաց Միսակը։

— Ես Մարիամի հարսն եմ,— ասաց կինը և էլի ջղայնացավ,— իսկ Պապիկը ո՞վ է, որ...

— Մարիամը ո՞ւր է...

Կինը քիթը վեր քաշեց.

— Կարուշի դարդից... երկու ամիս պառկեց, մտածեց, մտածեց, չդիմացավ...— Հետո կրկին ջղայնացավ,— երկու ամիս ես էի նրան խնամում... Իսկ Պապիկը ո՞վ է, որ... բոլորովին օտար մարդ... էլ տնից դուրս չգնաց։ Ասում է՝ ո՞ւր գնամ... ասում է՝ «դու ավելի օտար ես այս տան համար»։ Ինձ է ասում... Կարուշի կնոջը։ Հիմա, չի էլ ամաչում պառավը, միասին ենք ապրում այս սենյակում...

Միսակը այլևս տխրելու տեղ չուներ։ Միսակը հիշեց սուսուփուս Մարիամին ու Կարուշին։

Միսակը մտածեց, որ երկուսն էլ օտար են այս տան համար, և էլի կգան շատ օտար մարդիկ, իսկ տունը կմնա սառնասիրտ, և ոչ մեկինը չի լինի։ Ու Միսակին կյանքը թվաց արագավազ մի բան, ինչպես կիտրոնից դուրս պլստող կորիզ։

2.

— Մեղք է, Միսակ ջան, մեղք է... Քո տղան է, ախր, անպատճառ պրոֆեսոր հո չի դառնալու, — ասում էր Երմոնը:

— Անասուն է դառնում... նրա ինչ ամուսնանալու ժամանակն է...

— Է՛ է՛... էլի սկսեցիր,— ձեռքը վեր պարզելով ասաց տիկին Հռեբեկան:

— Դու շարունակ ընտանիքի մասին ես խոսում... ինչ կա վատ: Թող ընտանիք կազմի... Սիրով, լազաթով...— ասաց Երմոնը:

— Մարդիկ պետք է բան շինեն: Իսկ նա իր քեֆն ուզելու ետևից է ընկել: Ամենավախենալու մարդիկ են դրանք: Ինչ էլ ասես, էլի իրենց ուզածը կանեն:

— Կոպիտ ես, Միսակ, կոպիտ... Կարծես հերը չլինես:

Միսակին չէր կարելի համոզել, բայց Միսակը ուրիշ միջոց չէր գտնում: Եվ նոր տարվա գիշերը Միսակը կսկիծով ձեռքը թափ տվեց:

— Էս մեկին հաշվից հանում եմ... Արեք՝ ինչ ուզում եք:

— Էդպես, Միսակ ջան,— ասաց Երմոնը և համբուրեց Միսակի պարանոցը:

— Թող, աստված սիրես,— փնթփնթաց Միսակը:— Գիշերը էլի չալղչի էին դառել: Կլարնետը փչելով քուչաներն էին ընկել:

— Սերը էդպես գիտե... Մեռնեմ տղիս ջանին...,— ձգելով ասաց Երմոնը:

Պայթում էր Միսակի սենյակը մարդկանցից: Նայում էր Միսակը Ավոյին, նրա փոքրիկ, ասես մելանով գծած բեղերին, բարակ պարանոցին, հետո նրա կողքը նստած Նազիկին, որը կին էր դառնում, ու խղճում էր իրեն, նրանց, բոլոր մարդկանց: Հետո նայեց Ավոյի ընկերներին և, չգիտես ինչու, ժպտաց:

— Տեսար, դու էլ ես ուրախանում,— ասաց Հռեբեկան,— բա չէի՞ր ուզում:

— Հա,- ասաց Միսակը և ցավով զգաց, որ բացատրել, թե ինքը ինչ է ուզում, իզուր է, անօգուտ...

Խառնվել էին իրար կլարնետը, ակորդեոնը, պատեֆոնը:

Ոսկին պարեց: Պատվեցին, խմեցին, ծռեցին դեմքերը: Միսակի դուրը չէր գալիս, սակայն ինչ-որ տեղ նա ջերմություն զգաց դեպի այդ բոլորը հենց այնպես, ինչպես որ կա: Ուրեմն այսպես պետք է լինի: Այս է հիմա այն ընտանիքը, որ եկել է նրա նախնիներից, պատից նայող լուսանկարներից, շատ բաներ տեսած, մեծ պատմություն արած ցեղից:

Միսակը գինի խմեց, տաքացավ նրա մարմինը, և լավ ղեկավարեց այդ սենյակում մի կերպ տեղավորված մարդկանց: Հազար տեսակ մտքեր էին պայթում բոլորի մոտ, մտքերը պայթում էին և նույն րոպեին հանգչում: Մտքերը իրարամերժ էին, նենգոտ, ոգևորված, հանճարեղ, ըմբոստ, գեղեցիկ, ոճրադավ: Ահավոր էին կայծկլտող մտքերը, վախենալու և

խղճալու։ Եթե այս մտքերի խարույկները տևողական լինեին, աշխարհներ կքանդվեին, աշխարհներ կշինվեին, և մեծ գլուխգործոցներ կստեղծվեին։

Այդպիսին էր այդ հին ցեղի մտքի հատիկը։.

Վեր կացավ գործարանի դիրեկտորը՝ Շավարշ Կարպովիչը, բոլորը լռեցին, ու նա ռուսերեն ճառ ասաց.

Հետո Պապիկը հարբեց և խոսեց.

— Իմ փեշակը ազնվությունն է... Չէ, չէ... մի կարծեք, որ ես շատ ազնիվ մարդ եմ... Իմ փեշակն է ազնվությունը.... որովհետև ձեռնտու է։ Ես ազնվությամբ փող եմ աշխատում... Որ ձեռնտու չլիներ՝ ազնիվ չէի լինի... Իսկ մեր Միսակը ազնիվ է...

Պապիկը լաց եղավ, և նրա ուռած կարմիր աչքերը ավելի կարմրեցին։ Պապիկի հետ մի սենյակում բնակվող կինը նրան հանգստացնում էր։ Տղաները քաշում էին Պապիկի փեշից, որպեսզի նստեցնեն, սակայն Պապիկը չէր նստում։

— Թողեք ասեմ, թողեք... Ես մենակ մարդ եմ, կարգին տարիք ունեմ, իսկ ընտանիք չունեմ... — Բառերի հանգավորվելուց Պապիկը մի պահ կանգ առավ, ինքնիրեն ժպտաց։— Ուրիշի ընտանիքներն եմ հսկում և ուրախանում։ Միսակը այսքան մեծ ընտանիք ունի։ Նա ընտանիք է սիրում... Իսկական սիրում է... Բայց ես ավելի խորամանկ եմ։ Միսակի ընտանիքն ինչ է... մի պուճուր բան... նա էլ է իմ ընտանիքը մտնում... Բոլորդ իմ ընտանիքն եք... բոլորդ... Որովհետև մենք մի ցեղից ենք... դեռ ուրիշ ցեղերն էլ իմ ընտանիքն են... ես խորամանկ եմ...

— Խառնեց... սաղը խառնեց,— ծիծաղեցին տղաները,— նստիր...

Պապիկը նստեց ու ինքնիրեն երկար խոսում էր, որ ուրիշները պահում են իր ընտանիքը...

Տղաները նրա բաժակի մեջ ծխախոտի մոխիր էին լցնում ու զվարճանում է։

Միսակը որոշեց գրել Գակին իր ընտանիքի առաջին հարսանիքի մասին, մտովի արդեն պատրաստեց սկզբի տողը, հետո մոռացավ։

3.

Հինգ ամիս հետո Ավոն կրկեսի մի դերասանուհու հետ փախավ։

Միսակը գլուխ էր ջարդում, փորփրում էր իրեն, որպեսզի հասկանա Ավոյին, ներման ենթակա մի երանգ գտնի նրա վարմունքի մեջ, և ոչ մի կերպ չէր հասկանում։ Նազիկը լալիս էր։

Երմոնը Ավոյից նամակներ էր ստանում, սակայն Միսակից թաքցնում էր։ Նազիկին խրատում էր.

— Մի մտածի... կբեզարի՝ կգա... Դու կնիկն ես։ Երեխա ունես...

Սակայն Ավոն դեռևս վերադառնալու մտադրություն չուներ։ Կրկեսի հետ թափառում էր քաղաքից քաղաք։

Մի անգամ Երմոնը զգույշ հարցրեց Միսակին.

— Մեր գործարանում ունիֆորմիստ կա՞...

— Էդ ի՞նչ է...

— Աշխատանք... փեշակ...

Միսակը մտածեց և՝

— Չէ... ֆորմովշչիկ կա... էդ չգիտեմ...

Հետո Երմոնն ասաց.

— Ավոն աշխատանքի է ընդունվել։

Միսակը գլուխը բարձրացրեց.

— Ի՞նչ աշխատանք։

— Գրել է՝ ունիֆորմիստ...

Միսակը սկսեց հետաքրքրվել, իբր իմիջիայլոց հարցնել այս ու այնտեղ, և իր արտադրամասի երիտասարդ խառատից, որը սիրում էր գործիքներով աճպարարություն անել, իմացավ.

— Կրկեսի աշխատող է, Միսակ Սերգեևիչ.. ինչների՞դ է պետք...

— Հեչ, էնպես...

Մյուս օրը վերցրեց Երմոնին, տիկին Հռեբեկային և գնաց կրկես։ Առաջին մասը նայում էր՝ ցանկանալով կռահել, թե ո՞րն է ունիֆորմիստը։ Կասկածեց նույնիսկ ծաղրածուին ու, այդ մաքի արտառոցությունից ժպտաց։ Ընդմիջմանը մոտեցավ ծրագիր վաճառողին։

— Ո՞րն է ունիֆորմիստը,— հարցրեց Միսակը։

Ծրագիր վաճառողը քարշ տվեց Միսակի թևից դեպի արենան և ձեռքը պարզեց արենայի կենտրոնում գորգը ավլող, համազգեստով մարդու վրա։

— Թյու, քու մասսաբը...— մռմռաց Միսակը։

Երմոնն ու տիկին Հռեբեկան պաղպաղակ էին ուտում, և ժպիտը դեռ չէր իջել նրանց դեմքերից։

— Վեր, գնանք,— ասաց Միսակը։

Ճանապարհին Միսակը բորբոքված խոսում էր անընդհատ, և ինքն էլ էր զգում, որ այն մեծ զգացողությունը, այն իսկապես ճշմարիտը, այնուամենայնիվ, չէր կարողանում արտահայտել։ Ու ստացվում էր ջղայնացած մարդու էժան քրթմնջոց։

— Ավարա... ավարա... Ուրիշի տղաները մարդ դարձան, սովորեցին, աշխատեցին... Սարգիսը, քսանվեց տարեկան գործարանի ինժեներն է... Մարդիկ երկաթի հետ են խոսում օր ու գիշեր, որ նպատակին հասնեն... Մայմուն... թյու մայմուն... օջախ, թասիբ... ինչ է հասկանում... Ջանս դուրս գա՝ կաշխատեմ ձեզ համար... մենակ թե նպատակ ունեցեք... Գնացել է քածի ետևից... Ունիֆորմիստ...

— Է է է... Միսակ...— դժգոհեց Երմոնը։

— Հերիք տռտռաս,— ասաց տիկին Հռեբեկան, և Միսակը բոլորովին որբացած լռեց։

4.

Հայաստանի ազգաբնակչությունը դարձավ երկու միլիոն։ Այդ երկրորդ միլիոնը լրացնողի ծննդյան մասին գրեցին թերթերում։ Թերևս դա Միսակի վերջին թոռն էր։ Ու ապրում էր Միսակի ընտանիքը՝ ամուր տեղ գրավելով այդ երկու միլիոնի մեջ, իր հոգսերով, իր ուրախություններով։ Ավոն առաջվա պես կրկեսի հետ էր, սակայն նրա աղջիկը մեծանում էր։ Նազիկը ախ էր քաշում։ Նայում էր հեռուստացույց և երեխային կերակրում։ Ֆարադեյը վերջացրեց դպրոցը և ամեն տարի քննություններ էր հանձնում ինստիտուտում։ Գրիպի համաճարակ եղավ։ Նոր տարվա տոնակատարություններ։ Շաբաթը մեկ անգամ լվացք էին անում։ Սենյակը մի քանի անգամ նորոգեցին։ Ամեն ուրբաթ Միսակը բաղնիք էր գնում գործարանի տղաների հետ։ Բաղնիքից դուրս էին գալիս՝ միասին գարեջուր խմում։ Հաճախ առավոտները խաշ ուտելու էին գնում։ Գործարանում Միսակը վեց պատվոգիր ստացավ։ Քաղաքի նոր զանգվածում գործարանը տուն էր կառուցում, որին անհամբեր սպասում էր Միսակի ընտանիքը։ Ոսկիի կույր աղիքը հեռացրին։ Տղան ծածուկ լաց էր լինում մոր համար։ Ոսկիի ամուսինը գիրացել էր և գլուխը ամեն առավոտ սառը ջրի տակ էր կոխում։ Նրանք նոր բնակարան ստացան։ Կողքի փողոցից հանեցին տրամվայի ռելսերը և տեղագրեցին Միսակենց փոքրիկ հրապարակում։ Միսակը գնում էր թաղումների։ Հանում էր գլխարկը օտար հանգուցյալ տեսնելիս։ Բակում փոխվեցին երկու հարևան։ 90 տարեկան վանեցի քարտաշի սիրտը պայթեց զուգարանում։ Գյուղից մի քանի անգամ հյուրեր եկան Միսակի տունը։ Սեղանը շինեցին մահճակալ։ Քնում էին չորս հոգի մի անկողնում։ Բերում էին լավաշ հաց և իրենց հոտը։ Գնում էին և տանում իրենց հոտը։

Ապրում էին ընտանիքները Հայաստանում։

ԵՐՐՈՐԴ ՎԵՐԱԴԱՐՁ։ 1964։

1.

Երմոնը հանկարծ կողքից լսեց.

— Մի խոսք... եթե կարելի է...

Երմոնը նայեց։ Ընձակն էր։ Ինչ-որ տաք բան բարձրացավ Երմոնի ոտքերից մինչև գլուխը։ Դողացին նրա այտերը։ Ինչ-որ բան վիրավորեց Երմոնին։ Մի՞թե կարելի է մոտենալ հիսուն տարեկան անծանոթ կնոջը փողոցում։ Սակայն հենց այդ բանն էլ ջերմացրեց Երմոնին։ Նրան վաղուց պակասում էր մի զգացմունք, մի ղողդողացող, քաղցր զգացմունք, որը եղել էր երգերում, ուրիշների պատմություններում, իր աղջկա մոտ։ Այն, ինչ ինքը չէր ունեցել և թվում էր այլևս երբեք չի ունենալու... Մի կորած, քնած զգացմունք էր, քնած, և, որը, երևի, այդպես մնար մինչև մահ...

Երմոնը գլուխը թեքեց Ընձակից և շարունակեց ճանապարհը։

— Ներողություն... Մի փոքրիկ բան ունեմ ասելու,— մռմռաց Ընձակը և հետո անվերջ խոսում էր։ Նրա ասածները ջղայնացնում էին Երմոնին։ Զարմանալի էր Երմոնի ցանկությանը. ցանկություն ինքն իր դեմ։ Ու Երմոնը մշուշոտ զգաց, որ տարօրինակորեն, ջղայնությունից կարող է ծնվել հակառակ մի բան։

Երմոնը համառորեն լռում էր։ Սակայն նրա քայլվածքը անհաստատ էր, նրա այտերը վեր ու վար էին շարժվում, ու ներքուստ մի վախ կար՝ հանկարծ չհեռանա Ընձակը։ Թող խոսի, թող խնդրի... թե խառնվեցին Երմոնի մեջ նրա երեսուն տարվա երգած երգերը մի հնչյունով, մի անհասկանալի մեղրածոր արձագանքով...

Ընձակը հետևում էր նրան խանդաղատանքով, ժպտալով, մեղավոր արտահայտությամբ։ Երմոնի համառ լռությունը ստիպեց քիչ ընկրկել Ընձակին։ Երմոնի, առանց այն էլ մեծ, տարիքավոր կնոջ մասերը լարված քայլվածքից ավելի էին իրար անցնում, մեկը մյուսի վրա գալիս։ Ընձակը մի հայացք ձգեց նրա վրա և կրկին, համարձակություն առնելով, առաջ եկավ։

Երմոնը ուզում էր ասել՝ «Ես տղաներ ունեմ, թոռներ ունեմ»,— սակայն այդ մտքից տհաճ բան առաջացավ նրա մեջ, և նա ասաց.

— Ես մարդ ունեմ... ամոթ է...

Սակայն Ընձակը կրկին խոսում էր, խոսում... Ի վերջո Երմոնը ժպտաց։

Երեկոյան Ընձակը սպասում էր նրան։ Երմոնը դուրս չեկավ։ Սակայն հետևյալ օրերը շուկա գնալիս և վերադառնալիս Երմոնը հայացքով փնտրում էր Ընձակին։

Երմոնի դեմքին մի մեծ փաթաթան էր կապած, շալն իջած էր աչքերին։ Գիշերը ատամը ցավել էր ու հիմա, հազիվ հանգստացած, մզմզում էր։ Դեղերից լեզվի վրա տհաճ համ կար։ Երմոնը բերանը չէր շարժում։ Օդի մի փոքրիկ հոսանք զգացնել էր տալիս գիշերվա տառապանքը։

— Բարև, Երմոն,— անսպասելի հայտնվեր Ընձակը։ Նա նոր էր սափրվել և պուդրան՝ ծնոտին ու, նույնիսկ, քթին։ Մազերն ալիք-ալիք շարված էին ճշտապահ վարսավիրի կողմից, ու Ընձակը գլուխը ցից և զգույշ բերում էր Երմոնի կողքից։

Երմոնը գլխով արեց։ Հիմա արդեն ուրիշ բան անել չէր կարող։ Ձեռքը տարավ, դեպի փաթաթանը և մեղմ տնքաց։ Դա մի շարժում էր՝ արդարացնող այդ տեսքն ու փաթաթանը։

Երեկոյան նրանք հանդիպեցին քաղաքի մի խուլ արվարձանում։ Ընձակի մազերը կրկին խնամքով դասավորված էին, և Ընձակը կրկին վախենում էր գլուխը շարժել։ Երմոնը փաթաթանը հանել էր, սակայն բերանը բացել չէր վճռում։ Ու նա ծիծաղում էր բերանը ամուր փակած, կցկտուր։ Ընձակը իր գլուխը տանում էր Երմոնի կողքով և անեկդոտներ շշնջում, հետո նայում Երմոնի գունդուկծիկ մարմնին, նրա շատ փոքր բերանին...

Փողոցը մութ էր։ Լապտերները վերջացան։ Ու մթի մեջ երևում էին բարաքներ, ու երկաթգծի ռելսերը փայլում էին Ընձակի ոսկի ատամների նման։ Ընձակը, շնչակտուր, Երմոնին սեղմել էր ինչ-որ սպիտակ պատի և փորձում էր ափերով ընդգրկել նրա մեջքը։ Մեկ-մեկ, երբ Ընձակը ուժեղ էր հպում շուրթերը, Երմոնը ասես երազի մեջ զգում էր ատամի ցավը։ Սակայն այդ ցավը պարուրված էր շատ քաղցր, քաղցր զգացողության շերտով։

Միսակին Երմոնը մոռացել էր։ Իսկ երբ Միսակի շուրջը ծնվող մտքերը սկսում էին մոտենալ Երմոնին՝ մոտիկ չէր թողնում։ Միսակը Երմոնի մի ուրիշ կյանքն էր, լուրջ, հողեղեն։ Իսկ սա մի քաղցր հեքիաթ էր։ Երմոնը Միսակի մասին մտածում էր, ինչպես տիրոջ մասին, որ մտահոգված էր Երմոնի բարեկեցությամբ, և եթե տեսնի այս, երևի ներողամտաբար ժպտա, ինչպես այդ անում է, Երմոնի պատկերացմամբ, աստված։

Երեկոյան, երբ Երմոնը տուն եկավ, Միսակը իր կոշտ ձեռքով թափ տվեց նրա մեջքը։

— Աղջի, չե՞ս տեսել, մեջքդ ինչպես ես գաջոտել։

Ու Երմոնը լրիվ հանգստացավ։

Տիկին Հռեբեկան թախտին էր բազմել։ Ավոյի կինը՝ Նազիկը, նրա ոտքերի մոտ։ Երմոնը մահճակալին կիսապառկած էր։ Սենյակը լուսավորել էր հեռուստացույցի էկրանը։

Դռան մեջ երևաց Միսակը։

— Երմոն,— ասաց նա զսպված։ Դեմքը սփրթնած էր։ — Երմոն,— կրկնեց Միսակը և ուզում էր արժանապատվությամբ առանց իրեն կորցնելու խոսել, սակայն չկարողացավ։— Երմոն, տունս քանդեցիր,— ասաց նա և գլուխը խփեց պատին։ Ճակատին երևաց արյան բիծ։

— Ինչ ես անում, Միսակ ջան,— լացակումած, երգեցիկ ձայնով ասաց Երմոնը, սակայն ամեն ինչ հասկացավ։

2.

Իր երկարաձիգ կյանքի ընթացքում առաջին անգամ էր Միսակը փախչում ընտանիքից։ Երկու օր գնացքում էր գտնվում։ Այստեղ ավելի դժվար էր։ Միսակը անցնում էր վագոնից վագոն։ Ծխում էր անվերջ։ Փորձեց խմել։ Մտքերը ավելի ծանրացան։ Միսակը

սովորություն ուներ խմել միայն այն ժամանակ, երբ գործերը պարզ էին, ինքը հանգիստ էր։ Ու այդ շատ էր փրկել նրան փորձանքներից։

Միսակը լավ էր հիշում Վենդելին Գակի հասցեն, այնուամենայնիվ ամեն անգամ նա հանում էր գրպանից դեռևս 39 թվականի նամակը և ծրարի վրա կարդում։

Միսակը այնքան էր միջանցքով այս ու այն կողմ գնում, որ բոլոր կուպեների ուղևորները ճանաչում էին նրան։ Եվ բոլորը Միսակին երջանիկ էին թվում, նույնիսկ մի ոտքից զուրկ, տարեց ուղևորը։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց նա Միսակին։

— Տոմսկ,— ծխախոտի տուփը մեկնելով, ասաց Միսակը։

Ծխեցին և երկար ժամանակ լուռ էին։ Ծխելու ձևի և լռության մեջ պատերազմից մնացած բան կար։

— Հյո՞ւր եք գնում...

— Հա,— գլուխը թափ տվեց Միսակը։

— Ես էլ եմ Տոմսկ գնում։

— Այնտե՞ղ եք ապրում։

— Պատերազմից հետո... Առաջ Մինսկում էի ապրում... Ընտանիքս գերմանացիք ոչնչացրին...

— Մե՞ծ ընտանիք ունեիք։

— Երեք տղա...

Նա գրպանից հանեց նկարները և առանձին-առանձին ցույց էր տալիս, պատմում։ Միսակը չէր հասկանում նրա խոսքերը։ Միսակը իր ընտանիքի մասին էր մտածում։ Կրկին մտքերն արագացան, հետո սեղմվեց կոկորդում ու քրտինք երևաց ճակատին։ Միսակը բռնեց սիրտը։

— Ի՞նչ է, վա՞տ եք զգում,— հարցրեց մարդը։

— Ոչ։

— Ինչպե՞ս է... ձեր ընտանիքը,— զգույշ հարցրեց մարդը։

— Ոչինչ...

— Մե՞ծ է...

— Ինը հոգի։

— Տղանե՞ր...

— Տղաներ էլ կան։

— Ամուսնացա՞ծ են։

— Ամուսնացած են։ Թոռներ ունեմ, երեքը։

— Երջանիկ մարդ ես,— ասաց ուղևորը։

Միսակը ուզում էր պատմել իր ամբողջ պատմությունը, հարցնել, թե ի՞նչ է ընտանիքը, գուցե ինքը հնարել է, գուցե ինքը ստեղծել է այդ սրտի ցավը, այդ առեղծվածային կծիկը, որի մի ծայրը հեռուներում է, մյուսը՝ ավելի հեռու... Գուցե ամենը կյանք է։ Գուցե ճիշտ է Պապիկը։ Պարզապես ինքը և Պապիկը մի բան են։ Մենակ մարդիկ մենակների մեջ։ Կրկին խառնվեցին մտքերը։

«Տեսնեմ ի՞նչ կասի Գակը։ Գակը, միակ մարդը, որ կհասկանա ինձ»։ Միսակի մեջ կրկին սկսեցին համեմատվել իր հնարավորությունները։ «Մնալ Տոմսկում, ապրել Գակի հարևանությամբ, նորից ընտանիք կազմել, նորից աշխատել, կաշվից դուրս գալ, վաթսուն տարեկան հասակում նորից ընտանիք» ...Ու այդ միտքը այդպես էլ, պոռթկումից ուղղակի հետո, հանգչում էր։ Ի՞նչ ընտանիք, որտե՞ղ... Ընտանիքը մեկն է լինում, որն ունի սկիզբ, որն ունի շարունակություն։

Միսակը ծխեց։ Եվ ամենահեշտ միտքը հետևեց նախորդին։ Սպանել Ընձակին։ Թանաքանման գունավորումով հիշեց Պետրոսին, նրա խղճուկ երեսը...

«Չմտածել մինչև Գակին տեսնելը, չմտածել... Գուցե մի բան փոխվի իր մեջ... Աստված չան, երանի թե լիներ աստված, երանի թե»...

— Երջանիկ մարդ ես,— ասաց միոտանի մարդը։

Տոմսկում Միսակն ամեն անգամ հանում էր ծրարը և կարդում հասցեն։ Այդ փողոցը չկար այնտեղ։ Տեղեկատու բյուրոյում ասացին նույնը։ Պատահմամբ մի պեպենոտ կին, որը հաճույքով պաղպաղակ էր ուտում, ասաց.

— Քսանհինգ կիլոմետրի վրա մի ավան կա, այնտեղ, կարծեմ պետք է լինի այդպիսի փողոց։

Ճար չկար, Միսակը նստեց էլեկտրագնացք։

Ավանում փողոցը կար, համարը՝ չէր հասնում։

Երեխային կուրծք տալով դուրս եկավ կինը վերջին տնից և ձեռքը մեկնեց դեպի հեռվում երևացող կրակը։

— Եթե այդ տունը չլինի, ուրեմն՝ չկա։

Միսակը մթի մեջ, շան հաչոցների ուղեկցությամբ, բարձրացավ վեր։ Տունը բարաք էր։ Սակայն լավ ձևավորված։ Առաջը՝ բազմաթիվ ծաղիկներ։ Մթի մեջ բոլոր ծաղիկները

մանուշակագույն էին թվում։ Ծաղիկները բարձրացել էին պատուհաններին, իջել, ծածկել էին դռան շեմքը։

Միսակը ծեծեց ապակին։ Հետո ավելի ամուր։ Փոքրիկ աղջիկը սեղանի առջև գիրք էր կարդում։ Միսակը համարյա լսում էր աղջկա ձայնը, և շատ զարմանալի էր, որ աղջկան չէր հասնում իր թակոցը։ Ավելի ամուր ծեծեց։ Սպասումի մեջ նա պատկերացնում էր Գակին։ Ինչպիսի՞ն է հիմա։

— Ո՞վ է,— լսվեց ուրիշ կողմից։

Միսակը հազաց և կրկին ծեծեց։ Աղջիկը չշարժվեց տեղից։

— Ո՞վ է,- կրկին լսվեց նույն ձայնը և՝ հողաթափերի քստքստոց։ Մի երիտասարդ կին մոտեցավ և ճակատը հպեց ապակուն։ Բացեց դուռը։

— Ո՞ւմ եք ուզում,— հարցրեց նա։

— Գակին,— ասաց Միսակը և խեղճ ժպտաց,— Վենդելին Ֆրանցովիչ Գակին,— ու պարզեց հին նամակի վրայի հասցեն։

Աղջիկը լսում էր մոր և Միսակի զրույցը, իրար անծանոթ մարդկանց կիսատխուր խոսակցությունը։ Աղջիկը խղճում էր Միսակին, որ նա շատ ծեր է, ճերմակ մազեր ունի, և երևի, նույնպես մեռնի քեռի Վենդելինի նման։ Աղջիկը խղճում էր նրան և ինչ-որ տեղ ուրախանում, որ ինքը ծեր չէ, և երևի երբեք չծերանա... Հետո աղջիկը շեկ գլուխը դրեց գրքի վրա և քնեց։

— Անցյա՞լ տարի...

— Անցյալ տարի... Ոչ ոք չկար, որ թաղեր նրան։ Ֆաբրիկայի աշխատողները փող հավաքեցին, ֆաբկոմը հատկացրեց գումար և... Խեղճը բոլորովին մենակ էր...

— Ընտանիքից ե՞րբ է...— «զրկվել» ուզում էր հարցնել Միսակը։

Ընտանիք երբեք չի ունեցել։

— Երբեք...— տխուր մռմռաց Միսակը։

Կինը դռան մեջ այնքան կանգնեց, մինչև Միսակը իջավ նեղ արահետով ցած։ Արահետը տեսանելի էր դարձնում դռան միջից թափանցող լույսը։ Հետո Միսակը զգաց, թե ինչպես իր ետևում փակվեց դուռը, և լույսը չքացավ։ Մթի մեջ երևում էր նրա ճերմակ, գեղեցիկ գլուխը։ Եվ Միսակը լալիս էր։

Հետո նա դուրս եկավ փողոց, այստեղ մարդիկ կային, ու քիչ հանգստացավ։ Հանգստացավ, ինչպես երեխա ժամանակ էր լինում։ Այդպես հանգստանում էր և քնում։ Եվ գիտեր, որ առավոտ պետք է լինի։ Իսկ առավոտը անմահություն է, առավոտը կյանք է, առավոտը սպիտակ է։

3.

Երկու ամիս տնից հեռու էր Միսակը, օտար քաղաքում: Նրա այն մտքերը, որ հեռանա, հիմնվի մի շատ հյուսիսային քաղաքում և ապրի մենակ, անընդհատ տեղի էին տալիս: Եվ այդ բոլորը՝ նոր քաղաքը, որը կար, նոր աշխատանքը, որի հնարավորությունը ուներ, անմիտ թվացին ու ասես շեշտեցին կյանքի այն եզրագիծը, որին հասել էր Միսակը:

Ձմեռ էր: Միսակը մրսում էր: Եվ Միսակը խեղճացել էր: Նա սկսել էր հաշտվել իր մտքերի հետ, և այն, որ նախկինում այլափոխում էր Միսակին, հիմա խղճուկ ժպիտ էր առաջ բերում: Միսակը խաղաղվել էր: Ու զգում էր նա, որ, այնուամենայնիվ, ինքը պետք է թոռներին: Նա պետք է խնամի նրանց, քանի դեռ ձեռքերը շարժվում են... Պետք է ուղղակի նրանց կողքին լինի, որպեսզի տան դուռը կրկին փայտերով չփակեն, որպեսզի շնչառություն լինի սենյակում, և հացի բույր:

Հիշեց՝ ընտանիքը, իր մեծ ընտանիքը: Հիշեց Երմոնին... Եվ զարմանալի բան, սիրտը առաջվա պես չցավեց այդ հիշողությունից: Հետո հիշեց Պետրոսի տղային՝ Կարենին: Ու մի տարօրինակ զգացում համակեց նրան: Ուզեց խոսել նրա հետ, երկար խոսել: Պատմել իր մտքերը, որոնք շատ-շատ էին, իսկ Միսակը խոսքեր չուներ: Նա միայն կարող էր մտածել: Խորը, շատ խորը մտածել: Ու գիտեր նա, որ եթե փորձեր այդ մտքերը արտահայտել, ապա նրանք իր բերանում կրկին կդառնային միամիտ, ծիծաղելի: Եվ իրեն չեն հասկանա: Ինչո՞ւ մարդիկ չեն հասկանում իրար: Ինչո՞ւ ընտանիքի անդամները չեն հասկանում իրար:

Ոտքերի տակ ձյունը ճռճռում էր, և Միսակը մտածում էր:

Ինչպես է ծնվում մեղքը: Այն ո՞ր կետն է, որ ստանում է ընթացք, օղակներով մեծանում է, պղտորվում, վայրի շուրջպարի մեջ մտնում...

Եվ Միսակր վախեցավ հանկարծ, ուզեց հասկանալ, թե այն ինչ կետ էր, որից սկսվեց իր մեղքը, իր սպանաթյունը, այդ մեծ մեղքը ամենի առջև և իր առջև... Ու Միսակր մտածեց. երևի ինչ-որ կապ ունեն աշխարհի բոլոր մեղքերը: «Մարդիկ խեղճ են»,— մտածեց Միսակը և խղճաց բոլորին, և Գակին, և Պետրոսին, և Երմոնին, և Ընձակին... Հետո մտածեց, մտածեց և բոլորից շատ խղճաց իրեն:

«Անխուսափելի մի կապ կա մարդկանց միջև: Նրանց հարաբերությունները սոսնձի են նման, բաղադրված նրանց բոլոր առաքինություններով և մեղքերով: Եվ դա բնական երևույթ է, դա այլանդակություն չէ, դա կյանքն է, պետք է դիմանալ... խեղճ մարդիկ... խեղճ Ընձակ, խեղճ Երմոն...»:

Միսակը կանգնեց և ինքնիրեն հանկարծ ասաց. «Մամա ջան, անա ջան, մամա ջան...»: Նրա շուրթերը համարյա չշարժվեցին, բայց այդ ճիչի էր նման, լուռ ճիչի:

Եվ Միսակը զգաց, որ ահավոր անօգնական է:

Օդն ասես ճաքճքում էր ցրտից։

Մարդկանց բերանից գոլորշի էր ելնում։ Եվ մարդիկ շարժվում էին։ Ինչ-որ ծիծաղելի բան կար մարդկանց մեջ։

Պարզ էր օրը։ Ու մարդկանց շրջագծերը պարզ էին, շեշտակի, ինչպես Միսակի տեսած մանկական գրքերում, վաղուց, շատ վաղուց...

Ու ասես նորից սկսվեց կյանքը։ Միսակը զարմանալիորեն հստակ տեսավ իր մանկությունը, իր հոր մանկությունը, պապի մանկությունը, հետո նրանց նախնիների... Հետո նրանք դարձան հայրեր, ինքը՝ մի փոքրիկ երեխա։ Երեխա այս տեսքով, այս տարիքով, սպիտակ մազերով, կուչ եկած, մտքերը ցրիվ, փլված սրտով։

Գարեջրի կրպակի առջև հերթ էր կանգնած։ Հերթում կանգնողներից մեկը խմեց գարեջուրը, սրբեց բերանը, պտտվեց, և Միսակը տեսավ Ավոյին։ Միսակը մնաց կանգնած տեղը։ Ավոն ուղիղ նրա կողմն էր գալիս։ Հետո նա բարձրացրեց գլուխը և տեսավ հորը։

Ավոն մեծացել էր, բեղ թողել, նրա այտոսկրերն ու ծնոտը շատ առնական էին։ Այդպիսի այտոսկրներ Միսակի պապն ուներ։

Ավոն հարցնում էր, հարցնում էր, հարցնում էր, որպեսզի հայրը իրեն չհարցնի։ Սակայն Միսակը ոչինչ չէր հարցնում և ուրախացել էր, որ իր մենակության մեջ մենակ չի լինի։

— Ինչպե՞ս գտար ինձ, հայրիկ,— ասաց Ավոն,— երևի Գաստրոլ-բյուրոյի օգնությամբ։

Միսակը գլուխն էր տմբտմբացնում, և նրա աչքերը վճիտ էին, խաղաղ։ Նա տեսնում էր Ավոյի համոզվածությունը այն բանում, որ ինքը որդուն վերադարձնելու նպատակով է հասել այստեղ, և ամաչում էր, որ այդ այդպես չէ... Որ ինքն իր համար է։ Եվ Միսակը կրկին լցվեց։

Նրանք երկար քայլում էին ձյան մեջ։ Ավոն նայում էր հոր ոտքերին, հայրը՝ որդու։

— Գնանք մեզ մոտ...- ասաց Ավոն, հետո հոր հայացքում -նեղն ընկածի վարանոտ բան տեսավ ու, համաձայնելով, ավելացրեց,— սենյակ դեռ չունենք, նրա քրոջ սենյակում ենք ապրում... Շուտով կստանանք։

Հետո Ավոն ասաց.

— Իզուր ես եկել, հայրիկ, ես էլ տուն չեմ վերադառնա... Ուշ է... մենք սիրում ենք իրար...

Միսակը ոչ էլ ուզում էր խոսել այդ մասին։ Նա միայն իր ողբերգության հետ էր, որդին պարզ, իրենից ավելի երջանիկ էր թվում։

— Իսկ ես կվերադառնամ,— մտմտաց Միսակը։

— Դե պարզ է,— ժպտաց Ավոն,— ուրիշ ինչ պիտի անես...— և թեթևացավ, որ այդպես հեշտ լուծվեց հարցը։

— Ի՞նչ ես անում, էլի ունիֆորմի՞ստ ես,— երկար լռությունից հետո հարցրեց Միսակը։

— Ինչ ես ասում... Ես ինքնուրույն համար ունեմ...— աշխուժացավ Ավոն, իսկ Միսակին թվաց, որ նրա աշխուժությունը տխուր էր։

Ավոն գրպանից հանեց քառածալ մի թուղթ և բացեց։ Աֆիշ էր։ Ավոն բացեց աֆիշը, մի քիչ հեռացավ հորից, ցլամարտիկի նման պահեց աֆիշը։ Ձյան լրացուցիչ լույսը աֆիշն ավելի խայտաբղետ էր դարձնում։ «2—Ավոգադրո—2» գրած էր նրա վրա։ Ու Միսակը կարծես հայտնագործություն արեց, մտածելով, որ այդ անունը իսկական կրկեսի համար է եղել, ու նրան թվաց, որ ինքն է այդ ստեղծել, դեռ այն ժամանակ, երբ գրքում փնտրում էր երեխայի համար անուն...

Ամառային փայտե փոքրիկ ակումբ էր, մի կերպ ծածկ ու վրա արած։ Բեմահարթակի կողքին փողային նվագախմբի մնացորդներն էին նստած ու շատ միամիտ նվագում էին։ Դահլիճում մարդ քիչ կար, և Միսակը նստած էր առաջին կարգում։ Հանդիսատեսները վերարկուներով էին, ու Միսակը ամաչում էր, երբ բեմահարթակի վրա երևում էին մերկ դերասանները։ Նրանք վերջացնում էին համարը և բեմից հեռանում էին թե չէ, այնտեղ սպասող տղան վերարկուն գցում էր վրաները։

Վերջապես երևացին Ավոգադրոն և իր կինը։ Ավոյի մերկ մարմնի վրա գույնզգույն ապակիներից հագուստ էր, ու նա փայլում էր, և նրա բերանից գոլորշի էր դուրս գալիս։ Կինը 45 տարեկան կլիներ, նիհար էր և ջլուտ՝ տղամարդու նման։

Ավոն աթոռը ճակատին դրեց։ Աթոռի վրա նստեց կինը, ու Ավոն սկսեց ման ածել, պտտվել աթոռի ներքո։ Նրա գլուխը մտավ ուսերի մեջ, և երակները ուռեցին, ձգվեցին։

4.

Միսակը վերադառնում էր տուն։

Ինչ տեսակ տան դուռ պետք է տեսնի։ Կրկի՞ն տախտակներով մեխած։ Մի՞թե այդ երկու ամսվա ընթացքում կրկին ցիրուցան են եղել։ Ու Միսակը այդ մտքից արագ էր քայլում, շտապում... Հավաքել կրկին, փայփայել կրկին, ուրիշ ճար չկար, ոտքի կանգնեցնել, որ գոլորշի ելնի նրանց բերանից, որ շարժվեն նրանք, շատանան նրանք։

Կայարանում երաժշտություն էր նվագում։ Դիմավորում էին պատվիրակության։ Ամբոխի միջից հազիվ դուրս գալով, Միսակը գնում էր տուն։ Փողոցի կրպակում գնեց պայուսակ։ Հետո մտավ խանութ և գնեց կոշիկներ Վիլիկի համար, փոքրիկ շալվար Սամվելի համար, և էլի շատ բաներ, մինչև պայուսակը լցվեց։

Միսակը մտավ իրենց տան առջևի հրապարակը։ Աչք ածեց շուրջը։ Սիրտը ճմլվեց։ Մտքով շատ բաներ անցան։

Միսակը քայլեր էր անում, և նրա ծնկները ասես խտտում էին անհամբերությունից։ Եվ ներքուստ ուրախանում էր նա, որ կրկին իր ընտանիքն է գալիս, և ուրախությունից դողում

էին նրա այտերը, ու շատ տարօրինակ մի տխուր բան թռչկոտում էր կրծքից դեպի կոկորդը։ Միսակը նայում էր պատուհաններին, հայացքով ծանոթ փնտրում, որ բարևի։

— Միսա՞կ...— լսվեց նրա ետևից։

Միսակը պտտվեց և՝

— Հաջա՛ն...— խղճուկ ասաց նա։